ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի
N 56-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին **որոշում է**.

1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի «Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N 56-Ն որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

2019թ. _____ « »
Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 56-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կարգավորման շրջանակում Երևան քաղաքի ավագանու նախորդ գումարման 2017 թվականի հոկտեմբերի 31-ի նիստով ընդունվել է N 56-Ն որոշումը, որով հաստատվել է Երևանի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագիրը:

2018 թվականի սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած Երևան քաղաքի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում Երևան քաղաքում ձևավորվել են նոր տեղական ինքնակառավարման մարմիններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ) 82-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում ավագանու հաստատմանը:

ՀՀ արդարադատության նախարարության 07.12.2018թ. հ.05/14/630022-18 գրությամբ ներկայացված պետական փորձագիտական եզրակացության համաձայն՝ Երևանի ավագանու կողմից որպես նորմատիվ բնույթի որոշման նախագիծ մշակած Երևան քաղաքի ավագանու «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը հաստատման և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի դրույթները նորմատիվ բնույթի չեն, նախագիծը վարքագծի պարտադիր կանոններ չի պարունակում, ուստի՝ այն անհրաժեշտ է ընդունել այլ բնույթի ակտով:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (16.12.2016թ. ՀՕ-237-Ն օրենքի խմբագրությամբ) 82-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ Երևանի քաղաքապետի կողմից մշակվել է Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիր, որը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 45-Ա որոշմամբ:

Ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 56-Ն որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 56-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 56-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ